

որ յամառութեամբ բժշկութեան չէր ենթարկուում: Այս հիւանդների էլ դրութիւնը զգալի կերպով լաւացաւ նոր դեղի մի քանի սրսկումից յետոյ:

Այս բոլոր դիպուածներում տեղի ունեցած փայլուն հետեանքները զեկուցողները բացատրում են նոր դեղի մէջ տեղի ունեցող փոխազդեցութեամբ մէկ կողմից մանիշի, միւս կողմից՝ ըաղիի, որի հզօր ներգործութիւնը տարածուում է ոչ միայն տուբէրկուլեօզների բացիլլների վրայ, այլ և այն բացիլլների, որոնք սովորաբար գտնւում են տուբէրկուլեօզի հետ: Անշուշտ ըաղիին անփնաս է դարձնում ներանց թոյնն էլ—տօկսինները, որոնք նրանց հեռացնում են և որոնք աւելի վտանգաւոր են յօրինուածքի համար, քան իրանք բացիլլները: Բայց այս 'ի հարկէ դեռ վերջնական հաստատութեան կարօտ է:

Բ. ԽԼԻՐԴԻ (РАКЪ) ԲԺՇԿՈՒԹԻԻՆԸ

Մանուշակը, մեր դաշտային մանուշակը, համեմատութեան նշանակը, որ շատ հազիւ է գործ դրւում ժամանակակից բժշկականութեան մէջ, այժմ կարևոր տեղ կգրաւէ խլիրդի բժշկութեան մէջ, որ մինչև այժմ համարւում էր անբուժելի մի հիւանդութիւն: Անգլիական բժշկական մի խոշոր թերթ «The Lancet» հետեւեալ ցնցող փաստն է հաղորդում.

Մի պարոն, 53 տարեկան, որ կոկորդի խլիրդ ունէր, քննութեան ենթարկուեց անգլիական բժշկական աշխարհում հռչակուած երեք վիրաբույժների կողմից. բժիշկները եկան այն եզրակացութեան, որ անհրաժեշտ է նրան անմիջապէս անդամահատել: Բայց հիւանդն արհամարհելով իր շրջապատողների խորհուրդը, ժողովրդական միջոցների դիմեց:

Մի պառաւի խորհրդով նա դաշտ գնաց, մանուշակի մի քանի գրվ. տերևներ քաղեց, 24 ժամ ջրի մէջ դրջեց, յետոյ եռցրեց $\frac{1}{4}$ ժամ շարունակ:

Այդ հեղուկը երկու հաւասար մասի բաժնելով, նա մէկը խմեց, իսկ միւսից փաթեթ շինեց և դրեց վզին, խլիրդի արտաքին մասի վրայ:

Երկու ամիս այսպէս բժշկուելուց յետ, նա բոլորովին առողջացաւ և նրա բժիշկը, դօքտօր Գօրդօնը, որ հէնց սկզբից դիտում էր այս բժշկութիւնը, միանգամայն զարմացած էր հետեւանքի վրայ և այդ մասին հաղորդեց Լօնդօնի մի քանի գիտնական ընկերութիւններին: Խլիրդի այսօրինակ բժշկութիւնը, որ մինչև այժմ համարւում էր անբուժելի, ահագին իրարանցում առաջ բերեց Անգլիայում:

Գ. ԲԾԱԼՈՐ ՀԱՐԻՆՔԻ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

Օդէսայից Կ. Ղազարեանցը գրում է «Յ. Բ.» լրագրին. բժաւոր հարինքի դէմ, որ այնքան շատ գոհեր է տանում, առանց չափազանցելու կարելի է ասել, որ գրտնուած է նոր յատուկ տեղ: Այս միջոցը պրօֆ. Էրլիխի գտած 606-ը կամ դիօկսիդիամի-դօարսէնօբէնզօլն է: Այս դեղը առաջինը գործադրեց բժաւոր հարինքի դէմ Նովօրօս. համալսարանի պրօֆ. Լէվաշովը: Հետեւանքները աչք ծակող էին 0,6—0,7 թոյլերի, և 0,9 ամրակազմների համար. տաքութիւնը բուստարար ընկնում է, ինքնազգացութիւնը լաւանում և առողջութիւնը կանխում: Սրսկումը կատարւում է ներարկումով: Նովօրօս. համալսարանի կլինիկում գտնուած 14 հիւանդներից, որոնց վրայ գործ դրուեց Էրլիխի պրէպարատը, միայն մէկը ֆնասուեց, այն էլ նրա համար, որ նա շատ ուշ էր դիմել բժշկուելու համար: Այսպիսով Էրլիխի պրէպարատը, բացի լուէսից, փրկում է և մի ուրիշ, կեանքին ոչ պակաս, վտանգ սպառնող հիւանդութիւնից, այն է բժաւոր հարինքից: